«Երևանի Ավտոբուս» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

2021թ. դեկտեմբերի 31

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 1

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 4

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 5

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 6

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 7

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությանը և բաժնետիրոջը

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները՝ առ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ *«Կարծիքի ձևափոխման հիմքեր»* պարագրաֆում նկարագրված հարցի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի ձևափոխման հիմքեր

- Մենք Ընկերության աուդիտոր ենք նշանակվել 2022թ. մարտի 29-ին և, հետևաբար, չենք մասնակցել աուդիտի ենթարկվող ժամանակաշրջանի դրությամբ պաշարների գույքագրմանը: Ընկերության պաշարների բնույթից ելնելով՝ մենք չենք կարողացել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 376,048 հազար դրամ հաշվեկշռային արժեքով պաշարների առկայության վերաբերյալ (2020թ.՝ 362,701 հազար դրամ): Հետևաբար, մենք անկարող էինք որոշել՝ արդյոք անհրաժեշտ էր նշված գումարների հետ կապված որևէ ճշգրտում կատարել պաշարներում, շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պարտականությունները ներկայացված են «Աուդիտորի պարտականությունները ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ« հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՍԽ) կողմից հաստատված «Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի« (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Ընկերության նկատմամբ և պահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պարտականությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՍԽ Վարքագրքի: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Crowe & Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7 Argishti str., 1st floor,
Yerevan 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.am
www.asatryans.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
«Դոմ Մոսկվի» Բիզնես-Կենտրոն,
Արգիշտի փող. 7, 1-ին հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
general@asatryans.com
www.crowe.am
www.asatryans.com

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ընթացքում ղեկավարությունը պարտավոր է գնահատել Ընկերության գործունեության անընդհատությունը, բացահայտելու գործունեության անընդհատության վերաբերյալ խնդիրները և առաջնորդվել հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքով, եթե ղեկավարությունը չի պատրաստվում լուծարել ընկերությունը կամ դադարեցնել գործունեությունը կամ չունի այլընտրանք քան գործունեության դադարեցումն է:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ամբողջությամբ վերցրած, բոլոր էական առումներով զերծ են սխալներից՝ պայմանավորված խարդախություններով կամ բացթողումներով, և պատրաստել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ համաձայն աուդիտը մշտապես կհայտնաբերի էական սխալները և բացթողումները երբ դրանք առկա են: Սխալները կարող են առաջանալ խարդախության կամ բացթողումների հետևանքով և համարվում են էական, եթե առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել օգտագործողների տնտեսական որոշումների վրա, որոնք կայացվում են հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունները:

Աուդիտի ընթացքում, որն իրականացվել է ԱՄՍ համաձայն, մենք առաջնորդվել ենք մասնագիտական դատողությամբ և պրոֆեսիոնալ կասկածամտությամբ: Մենք նաև.

- Հայտնաբերել և գնահատել ենք էական սխալների ռիսկերը ֆինանսական հաշվետվություններում՝ պայմանավորված խարդախություններով և բացթողումներով, նախագծել և իրականացրել ենք աուդիտորական ընթացակարգեր այս ռիսկերին պատասխանելու նպատակով և ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած սխալի չհայտնաբերման ռիսկը ավելի բարձր է քան բացթողնման հետևանքով առաջացածինը, քանի որ խարդախությունը կարող է ընդգրկել գաղտնի պայմանավորվածություններ, խարդախություն, նպատակային բացթողում, յուրացում կամ նեքին վերահսկողական նորմերի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմել ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ, որպեսզի նախագծենք աուդիտորական ընթացակարգերը տվյալ հանգամանքներին համապատասխան, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:

- Գնահատել ենք Ընկերության ղեկավարության կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանությունը և հաշվապահական ողջամիտ գնահատումները և կից բացահայտումները:

- Որոշել ենք ղեկավարության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման գործունեության անընդհատության սկզբունքի օգտագործման համապատասխանությունը՝ ելնելով հավաքագրված աուդիտորական ապացույցներից, եղել են արդյոք էական անորոշություններ, որոնք կարող են առաջացնել կասկածներ, այն մասին, որ Ընկերությունը կարող է ունենալ խնդիրներ գործունեության անընդհատության հետ կապված: Եթե կան նման անորոշություններ, ապա մենք պարտավոր ենք մեր եզրակացությունում օգտագործողների ուշադրությունը հրավիրել այդ բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն ապա պարտավոր ենք ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև մեր կողմից աուդիտորական եզրակացություն տալու ամսաթիվը: Սակայն հետագա դեպքերը և հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերությանը դադարեցնել գործունեության անընդհատությունը:

- Գնահատել ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և թե արդյոք ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այպես, որպեսզի համարվի ճշմարիտ ներկայացում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք մենք հայտնաբերել ենք աուդիտի ընթացքում:

Մենք նաև ծանուցել ենք ղեկավարությանը, որ առաջնորդվել ենք էթիկայի դրույթներով, կապված անկախության հետ և բացահայտել ենք նրանց բոլոր փոխհարաբերությունները, որոնք կարելի է ողջամտորեն մտածել, որ կկրեն մեր հարաբերությունները և համապատասխան երաշխիքները, որտեղ որ կիրառելի է:

Այն բոլոր դիտարկումներից, որոնք քննարկվել են ղեկավարության հետ, ընտրվել են նրանք, որոնք առավել կարևոր են ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում և համարվում են, որպես հիմնական աուդիտորական հիմնահարցեր (ՀԱՀ): Մենք ներկայացրել ենք այդ խնդիրները աուդիտորական եզրակացությունում, եթե ՀՀ օրենսդրությամբ և սահմանված կարգերով չի արգելում հրապարակայնորեն բացահայտումը կամ, հազվադեպ դեպքերում, մենք որոշում ենք, որ նման բացահայտման դեպքում հասարակությանը հասցված վնասները ավելին կլինեն, քան նման բացահայտման օգուտները:

Աուդիտորական առաջադրանքի, որի արդյունքը այս աուդիտորական եզրակացությունն է, ղեկավարը Ալբերտ Ասատրյանն է:

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
առաջադրանքի պատասխանատու

26 մայիսի 2022թ.

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնբ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	4	2,271,229	874,452
Հետաձգված եկամուտ	5	509,923	356,510
Վաճառքի ինքնարժեք	6	(2,948,188)	(2,006,501)
Համախառն շահույթ/(վնաս)		(167,036)	(775,539)
Այլ եկամուտ	7	57,391	343,321
Վարչական ծախսեր	8	(386,999)	(170,384)
Այլ ծախսեր	7	(7,739)	(159,299)
Գործառնական գործունեությունից վնաս		(504,383)	(761,902)
Ֆինանսական եկամուտ		-	305
Այլ ֆինանսական հոդվածներ	9	(17)	291
Վնաս մինչև հարկերը		(504,400)	(761,307)
Շահութահարկի գծով ծախս	10	(6,561)	(55,659)
Տարվա վնաս		(510,961)	(816,966)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Հիմնական միջոցների վերագնահատում		4,328	-
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերվող շահութահարկ		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		4,328	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		(506,633)	(816,966)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2022թ. մայիսի 26-ին:

Էլբակ Թարփոշյան
Տնօրեն

Լուսաննա Մխիթարյան
Լիազորված հաշվապահ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	12,659,331	1,682,451
Ոչ նյութական ակտիվներ	12	5	33
Հետաձգված ֆինանսական ծախսեր		-	79
		12,659,336	1,682,563
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	13	376,048	362,701
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	48,943	29,994
Դրամական միջոցներ և համարժեքներ	15	153,717	21,273
		578,708	413,968
Ընդամենը ակտիվներ		13,238,044	2,096,531
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	16	2,381,740	1,488,340
Չգրանցված կապիտալ		414,800	443,400
Լրացուցիչ կապիտալ		972	972
Վերագնահատման պահուստ		96,831	101,159
Կոտակված շահույթ/(վնաս)		(2,518,948)	(2,012,315)
		375,395	21,556
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված եկամուտ	17	11,627,626	607,764
Հետաձգված հարկային պարտավորություններ	18	21,940	21,315
		11,649,566	629,079
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	19	484,155	517,340
Հետաձգված եկամուտ	17	530,439	752,428
Ընթացիկ պարտավորություն շահութահարկի գծով		-	55,659
Պահուստներ	12	198,489	120,469
		1,213,083	1,445,896
Ընդամենը պարտավորություններ		12,862,648	2,074,975
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		13,238,044	2,096,531

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնետիրա-կան կապիտալ	Չգրանցված կապիտալ	Պահուստային կապիտալ	Վերագնա-հատման պահուստ	Կուտակված շահույթ/ (վնաս)	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	1,213,340	275,000	972	100,844	(1,195,349)	394,807
Տարվա շահույթ/(վնաս)	-	-	-	-	(816,966)	(816,966)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-	-	315	-	315
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	315	(816,966)	(816,651)
Բաժնետիրական կապիտալի համալրում	275,000	168,400	-	-	-	443,400
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	275,000	168,400	-	-	-	443,400
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,488,340	443,400	972	101,159	(2,012,315)	21,556
Տարվա շահույթ/(վնաս)	-	-	-	-	(510,961)	(510,961)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-	-	(4,328)	4,328	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	(4,328)	(506,633)	(510,961)
Բաժնետիրական կապիտալի համալրում	893,400	(28,600)	-	-	-	864,800
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	893,400	(28,600)	-	-	-	864,800
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,381,740	414,800	972	96,831	(2,518,948)	375,395

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/(վնաս)	(506,633)	(816,966)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն	473,752	690,752
Հետաձգված եկամուտ	(509,923)	(356,510)
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս	5,292	-
Շահութահարկի գծով ծախս	6,561	55,659
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	17	(291)
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(530,934)	(427,355)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(18,949)	(20,843)
Պաշարների փոփոխություն	(13,347)	51,038
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(33,185)	172,760
Ապահովագրավճարներից փոխհատուցումներ	5,540	-
Պահուստների փոփոխություն	78,020	8,612
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(512,855)	(215,788)
Վճարված շահութահարկ	(61,019)	(925)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(573,874)	(216,713)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(222,823)	(279,126)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	4,482	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(218,341)	(279,126)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի համալրում	893,400	443,400
Ստացված շնորհներ	31,241	1,625
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	924,641	445,025
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	132,426	(50,814)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	18	(224)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ	21,273	72,311
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	153,717	21,273

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 41-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ-Ն (այսուհետ՝ «Ընկերություն») առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որը հիմնադրվել է 2011թ. դեկտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետության («ՀՀ») օրենսդրությանը համապատասխան՝ Երևան քաղաքի ավագանու 2011թ.-ի դեկտեմբերի 9-ի թիվ 346-Ա որոշման հիման վրա:

Ընկերության միակ բաժնետերը Երևան համայնքն է, որի անունից հանդես է գալիս Երևանի քաղաքապետը:

Ընկերության 100% բաժնետերն է Հայաստանի Հանրապետության Երևան համայնքը:

Ընկերությունը իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված, ինքնուրույն հաշվեկշռում հաշվառված գույք: Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ բաժնետիրոջ պարտավորությունների համար:

Ընկերության գործունեության հիմնական նպատակն է Երևանի վերգետնյա ուղևորատար տրանսպորտով /ավտոբուս/ բնակչությանը տրանսպորտային ծառայությունների մատուցումը: Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Ընկերությունը սահմանված կարգով հաստատված երթուղային ցանցով և չվացուցակներին համապատասխան իրականացնում է ուղևորափոխադրումներ ավտոբուսներով: Ընկերության գործունեության տեսակն է նաև վարձակալության տրված ավտոբուսների վարձավճարների գանձման ապահովումը:

2021թ. Ընկերության ավտոբուսներով ընդհանուր առմամբ տեղափոխվել է մոտավորապես 22,782.9 հազար ուղևոր, որից 22,557.3 հազարը վճարովի (225.6 հազարը անվճար): 2020թ. Ընկերության ավտոբուսներով ընդհանուր առմամբ տեղափոխվել է մոտավորապես 9,408 հազար ուղևոր, որից 8,553 հազարը վճարովի (855 հազարը անվճար): Ընկերության ավտոբուսային հավաքակազմում առկա է 2021թ.-ին 687 ավտոբուս, իսկ 2020թ.՝ 289:

2021թ. Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 450 մարդ, իսկ 2020թ.՝ 334 մարդ:

Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Թոնոյան փող., 5:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական ֆունկցիոնալ արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն:

2.5 Ընկերության կողմից ընդունված նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ընդունվել են ընթացիկ տարում

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունն առաջին անգամ կիրառեց որոշակի ստանդարտներ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2021թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություններ, որը թողարկվել է, բայց դեռ ուժի մեջ չի մտել:

ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
Covid-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ (ՖՀՄՍ 16-ի փոփոխություն)	1 Հունվարի, 2020թ.	Ընդունված
Բազային տոկոսադրույքի ռեֆորմ (IBOR) - Փուլ 2 (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 7, ՖՀՄՍ 4 և ՖՀՄՍ 16 փոփոխություններ)	1 Հունվարի, 2021թ.	Առաջընթաց

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք հրապարակված են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն:

ՖՀՄՍ հիմնադրամի կողմից ավարտված ծրագրեր	Նշված ամսաթվից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար	Կիրառելիությունը
Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում. «*Համախմբված ֆինանսական հաշվետվություններ*» և ՀՀՄՍ 28. «*Ներդրումներ ասոցիացված և դուստր ընկերություններում*» - Ներդրողի և նրա ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկության միջև ակտիվների վաճառք կամ ներդրում	Դեռևս չի սահմանվել ՖՀՄՍ Խորհրդի կողմից	-
Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. «*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*» և ՖՀՄՍ պրակտիկայի գծով հայտարարություն 2 (Էականության որոշման դատողությունների իրականացում) – Հաշվապահական քաղաքականության բացահայտումներ	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում. «*Հիմնական միջոցներ*» - Մուտքեր մինչև նախատեսված օգտագործումը	1 Հունվարի, 2022թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում. «*Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ*» - Անդրադարձ հայեցակարգային շրջանակին	1 Հունվարի, 2022թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 37. «*Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ - Անբարենպաստ պայմանագրեր*» – Պայմանագրի կատարման արժեքը	1 Հունվարի, 2022թ.	Առաջընթաց
ՖՀՄՍ 1. «*ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը*», ՖՀՄՍ 9. «*Ֆինանսական գործիքներ*», ՖՀՄՍ 16. «*Վարձակալություն*», ՀՀՄՍ 41. «*Գյուղատնտեսություն*»: ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումներ 2018-2020թթ.	1 Հունվարի, 2022թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում. «*Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում*»՝ Պարտավորությունների դասակարգումը ընթացիկի և ոչ ընթացիկի	1 Հունվարի, 2023թ.	Հետընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում. «*Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*»՝ Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում. «*Շահութահարկեր*»՝ Առանձին գործարքից բխող ակտիվների և պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց
ՖՀՄՍ 17. *"Ապահովագրության պայմանագրեր"*	1 Հունվարի, 2023թ.	Առաջընթաց

Ընկերության ղեկավարությունը չի կանխատեսում, որ այս փոփոխությունների կիրառումն էական ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտորնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքները.

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱՄՆ դոլար	480.14	522.59

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.2 Հիմնական միջոցներ

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները (հողեր, շենքեր և շինություններ), որոնք օգտագործվում են ծառայությունների մատուցման կամ վարչական նպատակով, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որը իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը՝ հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է զուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ անկախ գնահատողների կողմից այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ եկամուտներին և արտացոլվում է սեփական կապիտալում՝ որպես վերագնահատման պահուստ: Սակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Վերագնահատումից աճը ճանաչվում է կուտակված շահույթում Ընկերության կողմից ակտիվի օգտագործմանը զուգահեռ: Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճը իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճը ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության տալու կամ վարչական, կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Վարձակալական գույք հանդիսացող շենքերը նույնպես ընդգրկվում են հիմնական միջոցներում, եթե դրանք ստացվել են ֆինանսական վարձակալությամբ: Նման ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության ընթացքում (որը որոշվում է՝ համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ

օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	5 - 15 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	-	3 - 8 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	5 - 12 տարի

Հողի համար հնարավոր չէ որոշել վերջավոր օգտակար ծառայության ժամկետ: Ուստի համապատասխան հաշվեկշռային արժեքը չի ամորտիզացվում:

3.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-10 տարի:

3.3 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը նախ և առաջ գնահատում է, արդյոք պայմանագիրը հանդիսանում կամ պարունակում է վարձակալություն: Այսինքն, եթե պայմանագրով իդենտիֆիկացվող ակտիվի օգտագործման իրավունքը որոշակի ժամանակահատվածով փոխանցվում է փոհատուցման դիմաց:

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կիրառում է միանման մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալության: Ընկերությունը ճանաչում է պարտավորություն վարձակալության վճարները՝ Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով, որպեսզի վճարի վարձավճարները և Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները, որը իրենից ներկայացնում է տվյալ ակտիվի օգտագործման իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ճանաչում է վարձակալության սկզբում (այսինքն՝ այն ամսաթվով, երբ տվյալ ակտիվը մատչելի է օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները, և ճշգրտվում են կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով պարտավորության վարաչափումից: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է պարտավորություններում ճանաչված կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով արժեքը, առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները և վարձավճարները, որոնք կատարվել են մինչև վարձակալությունը սկսելու ամսաթիվը կամ այդ ամսաթվին կատարված վարձավճարները, հանած վարձակալության գծով ստացված ցանկացած արտոնություններ կամ զեղչեր:

Այն դեպքում, երբ վարձակալած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության պայմանագրի ավարտին՝ վերջում, անցնում է Ընկերությանը կամ սկզբնական արժեքը

արտացոլում է տվյալ վարձակալած ակտիվի գնման օպցիոն, ապա մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետով: գտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես պետք է արժեզրկման ստուգման (թեսթ) ենթարկվեն:

Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

Վարձակալության սկսման պահին, Ընկերությունը կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով չափում է վարձակալության ժամանակահատվածի ընթացքում կատարված կամ կատարվելիք վարձավճարների իրական արժեքով: Վարձավճարները ներառում են՝ հաստատուն՝ ֆիքսված վճարները (ներառյալ հաստատուն վճարումները), հանած վարձակալության հետ կապված ցանկացած ստացվելիք խրախուսումներ, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, և որոնք սկզբնապես չափվել են՝ կիրառելով մեկնարկի ամսաթվին գործող ինդեքսը կամ դրույքը և գումարները, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումները, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն որևէ ինդեքսից կամ տոկոսադրույքներից (ներառում են, օրինակ՝ վճարումներ՝ կապված սպառողական գների ինդեքսից, վճարումներ՝ կապված ուղենշային տոկոսադրույքից (ինչպես օրինակ՝ LIBOR-ը), ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, որում այդ դեպքերը տեղի են ունեցել:

Վարձավճարների իրական արժեքը հաշվարկելիս, Ընկերությունը կիրառում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը վարձակալության սկզբի ամսաթվի դրությամբ, որովհետև վարձակալության պայմանագրի մեջ ենթադրյալ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշվել: Վարձակալության սկսելուց հետո կրեդիտորական պարտքերը վարձակալության գծով ավելանում են (աճում են)՝ տոկոսների ավելացումով պայմանավորված, և նվազում են վարձավճարների վճարումով: Բացի դրանից, կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով հողվածի հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե առկա է ձևափոխություն, փոփոխություն, փոփոխություն վարձակալության ժամանակահատվածում, փոփոխություն վարձավճարում կամ տվյալ ակտիվի ձեռք բերման օպցիոնի գնահատման փոփոխություն:

3.4 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք առաջին ելք մեթոդը (ԱՄԱԵ), և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.5 Ֆինանսական գործիքներ

Այս ծանոթագրությունը տեղեկատվություն է տալիս Ընկերության ֆինանսական գործիքների վերաբերյալ, ներառյալ՝

- Ընկերության բոլոր ֆինանսական գործիքների ներկայացումը
- Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքների պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները չափվում են իրական արժեքով: Գործարքի հետ կապված ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը կամ թողարկմանը (բացառությամբ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների) նախնական ճանաչման ժամանակ համապատասխանաբար գումարվում կամ պակասեցվում են ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքից: Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսերը անմիջապես ճանաչվում են շահույթ կամ վնասում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը

- Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)
- Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉՇՎ)

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը

- Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող
- Ֆինանսական պարտավորություններ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)

<u>Ֆինանսական ակտիվներ ամորտիզացված արժեքով չափվող</u>

Պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին, սկզբնական ճանաչումից հետո չափվում են ամորտիզացված արժեքով, այն դեպքում, երբ.

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները պայմանագրային դրամական հոսքեր հավաքագրելու համար, և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

<u>Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող (ԻԱՉԱՀՖԱ)</u>

- ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելում, որի նպատակն է ապահովել պայմանագրային դրամական միջոցների հոսքեր և պահվում են վաճառքի նպատակով, և

- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները հատուկ օրերին ավելացնում են դրամական հոսքերը, որոնք պարզապես մայր գումարի և տոկոսագումարների վճարումներն են:

Ֆինանսական ակտիվներ իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող (ԻԱՉԾՎ)

Մնացած բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք չեն ներառվում վերոնշյալների մեջ, ինքնստինքյան չափվում են իրական արժեքով շահույթ կամ վնասի միջոցով (ԻԱՉԾՎ):

Ֆինանսական պարտավորություններ ամորտիզացված արժեքով չափվող

Բոլոր ֆինանսական պարտավորությունները, սկզբնական ճանաչումից հետ, չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կամ ԻԱՉԾՎ մեթոդը: Այնուամենայնիվ, ֆինանսական պարտավորությունները, որոնք առաջանում են, երբ ֆինանսական ակտիվի փոխանցումը չի համապատասխանում ապաճանաչմանը կամ երբ շարունակական ներգրավվածության մոտեցում է կիրառվում և Ընկերության կողմից, թողարկված ֆինանսական երաշխիքի պայմանագրերը չափվում են ստորև նշված հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխան՝

Ֆինանսական պարտավորություններ (ԻԱՉԾՎ) ներկայացվող

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ԻԱՉԾՎ ներկայացվող, երբ ֆինանսական պարտավորությունը հանդիսանում է՝ (ա) ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ ձեռք բերողի պայմանական հատուցումը (բ) պահվում է առևտրային նպատակով կամ (գ) այն նախատեսված է ԻԱՉԾՎ-ի համար:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող եթե.

- այն բացառապես ձեռք է բերվել մոտ ապագայում վերավաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման ժամանակ այն հանդիսանում է իդնտիֆիկացվող ֆինանսական գործիքների մի մաս, որը Ընկերությունը միասին է կառավարում և ունի կարճաժամկետ շահույթ ստանալու փաստ:
- Այն ածանցյալ գործիք է, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք հանդիսանում են ֆինանսական երաշխիքի պայմանագրեր կամ նախանշված արդյունավետ հեջավորման գործիքներից:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը միայն երբ ակտիվից դրամական հոսքերի պայմանագրային իրավունքները սպառվում են կամ երբ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և էականորեն ակտիվի սեփականության բոլոր ռիսկերն ու հատույցները մեկ այլ կազմակերպության: Եթե Կազմակերպությունը ոչ փոխանցում է, և ոչ էլ պահպանում սեփականության հետ կապված էականորեն բոլոր ռիսկերն ու հատույցները և շարունակում է վերահսկել փոխանցված ակտիվը, ապա Կազմակերպությունը ճանաչում է իր հետաքրքրությունը ակտիվի հանդեպ և այն գումարների հետ կապված պարտավորությունը, որն այն կարող է վճարել: Եթե Կազմակերպությունը կրում է փոխանցված ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերը և հատույցները, ապա Կազմակերպությունը շարունակում է ճանաչել

ֆինանսական ակտիվը, ինչպես նաև ճանաչում է ստացված օգուտների գրավաղրված փոխառությունները:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի ապաճանաչման ժամանակ ակտիվի մնացորդային արժեքի և հատուցված կամ հատուցվող գումարի տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում: Ի հավելում, պարտքային գործիքի մեջ ներդրման, դասակարգված որպես «Իրական արժեքով չափվող շահույթ կամ վնասում ներկայացվող» (ԻԱՉԾՎ), ապաճանաչման ժամանակ ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը վերադասակարգվում է շահույթ կամ վնասում: Եվ հակառակը, բաժնային գործիքի մեջ ներդրման ապաճանաչման ժամանակ, որը սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը ընտրել է ԻԱՉԾՎ մեթոդը ներդրումների վերագնահատման պահուստում նախկինում հաշվարկված կուտակային օգուտ կամ վնասը չի վերադասակարգվում շահույթ կամ վնասում, այլ տեղափոխվում է կուտակված շահույթ կամ վնաս:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը միայն և միայն, երբ Կազմակերպությունը ֆինանսական գործիքի պարտավորություններից ազատվել է, չեղարկվել է կամ սպառվել է պայմանագրային պարտավորությունը: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության մնացորդային արժեքի և փոխհատուցված կամ փոխհատուցվող գումարի միջև տարբերությունը ճանաչվում է շահույթ կամ վնասում:

Երբ Կազմակերպությունը առկա վարկատուի հետ մեկ պարտքային գործիքը փոխանակում է մյուսի հետ՝ զգալիորեն տարբեր պայմաններով, ապա այսպիսի փոխանակումը դիտարկվում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նույն կերպ, Կազմակերպությունը առկա պարտավորության կամ դրա մի մասի էական պայմանների փոփոխությունը դիտարկում է որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր պարտավորության ճանաչում: Ենթադրվում է, որ պայմանները էական տարբեր են համարվում, եթե նոր պայմաններով դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքը, ներառյալ բոլոր վճարված վճարումների և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված և ստացված վճարումների տարբերությունը, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության մնացորդային դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքից: Եթե փոփոխությունը էական չէ մինչև փոփոխությունը պարտավորության մնացորդային արժեքի և փոփոխությունից հետո դրամական հոսքերի ներկա արժեքի միջև, ապա տարբերությունը պետք է ճանաչվի շահույթ կամ վնասում այլ եկամուտների կամ վնասների հետ մեկտեղ, որպես փոփոխությունից շահույթ կամ վնաս:

Ֆինանսական գործիքների արժեզրկում

Պարտքային գործիքներում ներդրումների արժեզրկումից կորուստները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ ԻԱՉԱՀԱ-ով, Կազմակերպությունը ճանաչում է հետևյալ դեպքերում՝ սպասվելիք վարկային կորուստների, ֆինանսական վարձակալության դեբիտորական պարտքերի, առևտրային դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի պայմանագրերի մասով: «Դեբիտորական պարտքերի սպասվող կորուստների» (ԴՊՍԿ) գումարները, սկսած համապատասխան ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչումից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին թարմացվում են՝ վարկային ռիսկում փոփոխություններն արտացոլելու համար:

Կազմակերպությունը միշտ ճանաչում է ԴՊՍԿ-ը առևտրային դեբիտորական պարտքերի, պայմանագրային ակտիվների և ֆինանսական վարձակալությունից դեբիտորական պարտքերի համար: Այս ֆինանսական ակտիվներից սպասվող վարկային կորուստները գնահատվում են՝ օգտագործելով պահուստի հաշվարկման համար մշակված համապատասխան մատրիցան՝ հիմնվելով Կազմակերպության պատմական վարկային կորուստի փորձի վրա, ճշգրտված պարտապանների համար հատուկ գործոններով, ընդհանուր տնտեսական պայմաններով և ընթացիկ, ինչպես նաև հաշվետու ամսաթվի պայմաններին կանխատեսվող ուղղության գնահատմամբ, ներառյալ երբ կիրառելի է դրամի արժեքը ժամանակի մեջ:

Մյուս բոլոր ֆինանսական գործիքների համար, Կազմակերպությունը ճանաչում է ԴՊՍԿ-ն, երբ տեղի է ունեցել սկզբնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճ: Այնուամենայնիվ, եթե ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալի չի բարձրացել սկզբնական ճանաչումից ի վեր, ապա Կազմակերպությունը այդ ֆինանսական գործիքից կորուստի պահուստը չափում է 12 ամսվա ԴՊՍԿ-ի համարժեք գումարով:

ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է սպասվող վարկային կորուստներ ֆինանսական գործիքի ամբողջ կյանքի ընթացքում հնարավոր դեֆոլտի արդյունքում: Եվ հակառակը, 12 ամսվա ԴՊՍԿ-ն իրենից ներկայացնում է կյանքի ընթացքում ԴՊՍԿ-ի այն մասը, որը սպասվում է որ կառաջանա ֆինանսական գործիքի հնարավոր դեֆոլտից հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 23-ում:

3.6 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին

այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է, և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

3.7 Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

3.8 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Ընկերության կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռքբերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանը՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում:Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.10 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.11 Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են, որպես այդ ակտիվի արժեքի մի մաս: Ընկերության այլ փոխառության ծախսումները ճանաչվում են, որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են: Ընկերությունը սկսում է կապիտալացնել փոխառության ծախսումները, որպես որակավորվող ակտիվի արժեքի մաս մեկնարկի ամսաթվին, երբ Ընկերությունն առաջին անգամ բավարարում է հետևյալ բոլոր պայմանները.

- Ակտիվի համար կատարում է ծախսեր
- Կատարում է փոխառության ծախսումներ
- Ձեռնարկում է այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ են՝ ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար

Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները բացառապես փոխառնում է որակավորվող ակտիվ ձեռք բերելու նպատակով, փոխառության ծախսումների գումարը, որը ենթակա է այդ ակտիվի վրա կապիտալացման, Ընկերությունը որոշում է որպես փոխառության փաստացի ծախսումներ, որոնք առաջանում են այդ փոխառությունից տվյալ

ժամանակաշրջանում՝ հանած այդ փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումից ստացվող ցանկացած եկամուտ:

Այնքանով, որքանով Ընկերությունը միջոցները փոխառնում է ընդհանուր նպատակներով և օգտագործում է որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով, Ընկերությունը կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշում է՝ այդ ակտիվի գծով ծախսերի նկատմամբ կիրառելով կապիտալացման դրույքը: Կապիտալցման դրույքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության չմարված փոխառություններին վերաբերող փոխառության ծախսումների միջին կշռված մեծությունն է, բացառությամբ այն փոխառությունների, որոնք բացառապես կատարվել են որակավորվող ակտիվի ձեռքբերման նպատակով:

Փոխառության ծախսումների կապիտալացումը կասեցվում է այն ժամանակաշրջանի ընթացքում, որի ժամանակ Ընկերությունը դադարեցնում է որակավորվող ակտիվների վրա կատարվող աշխատանքները: Փոխառության ծախսումների կապիտալացումը դադարեցվում է, երբ էական բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ են որակավորվող ակտիվը օգտագործման կամ վաճառքի նախատեսված վիճակի բերելու համար, վարատված են:

3.12 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Ընկերությունը առաջին անգամ ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտը կիրառել է 2018թ. հունվարի 1-ից: Մի շարք նոր ընդունված ստանդարտներ նույնպես կիրառվել են Ընկերության կողմից 2018թ. հունվարի 1-ից, բայց դրանք էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից նոր ընդունված ստանդարտներին անցման հետևանքով պահանջվող համադրելի ֆինանսական հաշվետվությունները չեն վերաներկայացվել:

ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտը սահմանում է համապարփակ մոտեցումներ հասույթի որոշման գծով, թե երբ հասույթը պետք է ճանաչվի և ինչ գումարով պետք է ճանաչվի: Սույն ստանդարտ փոխարինում է ՀՀՄՍ 18. *«Հասույթ»*, ՀՀՄՍ 11. *«Կառուցման պայմանագրեր»* ստանդարտներին և համապատասխան մեկնաբանություններին: Համաձայն ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտի, հասույթը ճանաչվում է, երբ գնորդը կամ ծառայություն ստացողը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ: Վերահսկողության իրավունքի փոխանցման ժամկետի որոշումը, «Ժամանակի կոնկրետ պահին», թե «Ժամանակի ընթացքում», պահանջում է դատողություններ:

Ընկերությունը ընդունել է ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտը՝ օգտագործելով կոմուլյատիվ (աճողական) ազդեցության մեթոդը (առանց գործնական օգուտ ունենալու մտադրության)՝ սկզբնական ընդունման պահին կիրառելով սկզբնական ընդունումից առաջացող ազդեցությունները (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ից): Համապատասխանաբար 2017թ. համադրելի ֆինանսական տեղեկատվությունը չի վերաներկայացվել: Այսինքն այն ներկայացված է ինչպես նախորդ տարի ներկայացվել է՝ ՀՀՄՍ 18. *«Հասույթ»*, ՀՀՄՍ 11. *«Կառուցման պայմանագրեր»* ստանդարտների և մեկնաբանություններին համապատասխան: Համապատասխանաբար ՖՀՄՍ 15. *«Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»* ստանդարտով պահանջվող

բացահայտումները, ինչպես ընդունված է, չեն կիրառվում համադրելի տեղեկատվության վրա:

Ընկերության հասույթի ճանաչման հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տես ծանոթագրություն 4:

4 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ուղևորների փոխադրումից հասույթ	2,259,465	855,288
Փոխադրման ծառայություններից հասույթ	11,764	19,164
	2,271,229	874,452

Ընկերության հասույթը ձևավորվում է հիմնականում Երևան քաղաքում հասարակությանը ուղևորափոխադրման ծառայությունների մատուցումից: Յուրաքանչյուր ուղևորի համար վճարը կազմում է 100 դրամ: Ուղևորավճարը համաձայնեցված է «Երևանտրանս» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով:

Հասույթը նաև ձևավորվում է փոխադրման ծառայություններից, որոնք տրամադրվում են Երևանի քաղաքապետարանին և «Երևանտրանս» ՓԲԸ-ին, որը 2020թ.-ին կազմել է 11,764 հազար դրամ, իսկ 2019թ.՝ 19,164 հազար դրամ:

Ուղևորների թվաքանակը ըստ տարիների ունի հետևյալ պատկերը՝

- 2021թ. տարվա համար՝ 22,782.9 հազար ուղևոր, որից
  - վճարովի՝ 22,557.3 հազար ուղևոր
  - անվճար՝ 225.6 հազար ուղևոր
- 2020թ. տարվա համար՝ 9,408 հազար ուղևոր, որից
  - վճարովի՝ 8,552.9 հազար ուղևոր
  - անվճար՝ 855.1 հազար ուղևոր

5 Հետաձգված եկամուտ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	504,935	346,298
Հետաձգված եկամուտ եկամուտներին վերաբերող շնորհներից	4,988	10,212
	509,923	356,510

6 Ինքնարժեք

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցներին հատուցումներ	824,800	418,927
Մաշվածություն	407,353	445,451
Պաշարներ	1,455,557	874,659
Մասնագիտական ծառայություններ	38,684	37,465
Պետական տուրքեր	135,104	207,264
Ապահովագրություն	21,417	22,605
Այլ	65,273	130
	2,948,188	2,006,501

7 Այլ եկամուտներ/ (ծախսեր)

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Այլ եկամուտներ		
Տույժեր և տուգանքներ	4,588	3,177
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտ	6,603	5,185
Ապահովագրություն	6,300	3,864
Գովազդային ծառայություն	8,255	4,771
Այլ եկամուտներ	31,645	326,324
	57,391	343,321
Այլ ծախսեր		
Հիմնական միջոցների օտարում	(5,292)	(61,274)
Տույժեր և տուգանքներ	(2,447)	(97,203)
Այլ ծախսեր	-	(823)
	(7,739)	(159,300)
	49,652	184,021

8 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատակիցներին հատուցումներ	142,606	85,254
Մաշվածություն	73,090	2,984
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	24,039	17,872
Պահուստներ	116,969	-
Գործառնական վարձակալություն	4,131	6,032
Չփոխհատուցվող հարկեր	2,638	3,676
Այլ	23,526	54,566
	386,999	170,384

9 Այլ ֆինանսական հոդվածներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից եկամուտ		
Փոխարժեքային տարբերություններից օգուտ		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	3	295
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	-
	12	295
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ծախս		
Փոխարժեքային տարբերություններից վնաս		
- Դրամական միջոցներ և համարժեքներ	(29)	(4)
	(29)	(4)
Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից զուտ եկամուտ/(ծախս)	(17)	291

10 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	5,054	55,659
Հետաձգված հարկ	1,507	-
	6,561	55,659

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	(504,400)		(761,307)	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2020թ.՝ 18%)	(90,792)	18.0	(137,035)	18.0
(Չհարկվող եկամուտ)/չնվազեցվող ծախսեր, զուտ	97,353	(19.3)	192,694	(25.3)
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	6,561	(1.3)	55,659	(7.3)

11 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող	Շենքեր և շինություններ	Տրանսպորտային միջոցներ	Մեքենասարքա-վորումներ և այլ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	213,084	35,435	4,952,556	629,968	-	5,831,043
Ավելացում	-	-	1,624	5,857	-	7,481
Կապիտալացում	-	-	-	-	163,570	163,570
Ներքին շարժ	-	-	163,115	455	(163,570)	-
Օտարում	-	-	-	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	213,084	35,435	5,117,295	636,280	-	6,002,094
Ավելացում	-	-	11,260,920	119,501		11,380,421
Կապիտալացում	-	-	-	-	75,503	75,503
Ներքին շարժ	-	-	73,891	1,612	(75,503)	-
Օտարում	-	-	(3,501)	(99,319)	-	(102,820)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	213,084	35,435	16,448,605	658,074	-	17,355,198
Կուտակված մաշվածություն և արժեզրկում						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	(3,276,130)	(352,761)	-	(3,628,891)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(6,031)	(539,655)	(145,066)	-	(690,752)
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(6,031)	(3,815,785)	(497,827)	-	(4,319,643)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	-	(5,986)	(358,118)	(109,648)	-	(473,752)
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	97,528	-	97,528
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	(12,017)	(4,173,903)	(509,947)	-	(4,695,867)
Հաշվեկշռային արժեք						
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	213,084	35,435	1,676,426	277,207	-	2,202,152
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	213,084	29,404	1,301,510	138,453	-	1,682,451
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	213,084	23,418	12,274,702	148,127	-	12,659,331

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 45,517 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ ունեն զրո հաշվեկշռային արժեք (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 96,177 հազար դրամ):

Հողն ու շենքերը գտնվում են ք. Երևան Շիրակի 9 հասցեում, հողի ընդհանուր տարածքը կազմում է 13,755 քառ. մետր: Հողը շնորհվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: 2019թ.-ի ընթացքում Ընկերությունը վերագնահատել է իր հողն ու շենքերը: Գնահատումն իրականացվել է անկախ գնահատողի կողմից:

Ընկերության հիմնական միջոցները գրավադրված չեն:

12 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	1,046	1,046
Ավելացում		-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,046	1,046
Ավելացում	10	10
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,056	1,056
Կուտակված մաշվածություն և արժեզրկում		
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	(943)	(943)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(70)	(70)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(1,014)	(1,014)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(37)	(37)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(1,051)	(1,051)
Հաշվեկշռային արժեք		
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	102	102
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	32	32
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5	5

13 Պաշարներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք և նյութեր	20,541	29,910
Պահեստամասեր	331,401	322,756
Վառելիք և յուղեր	18,010	9,678
Այլ	6,096	357
	376,048	362,701

14 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	11,800	6,389
Տրված կանխավճարներ	1,830	5,866
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	34,013	9,196
Այլ դեբիտորական պարտքեր	1,300	8,543
	48,943	29,994

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ընկերության բոլոր դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Ընկերությունը չունի ուղևորավճարների գծով դեբիտորական պարտքեր: Բոլոր գործարքները իրականացվում են կանխիկով: Առևտրային դեբիտորական պարտքերն առաջանում են գովազդային և այլ ծառայությունների մատուցումից:

15 Դրամական միջոցներ և համարժեքներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	6,581	5,209
Բանկային հաշիվներ	143,467	16,064
Դրամական միջոցներ ճանապարհին	3,669	-
	153,717	21,273

16 Կապիտալ և պահուստներ

Հայտարարված բաժնետոմսեր	2021թ.	2020թ.
238,174 հատ հասարակ բաժնետոմս, յուրաքանչյուրը՝ 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով	2,381,740	1,488,340

	2021թ.		2020թ.	
Բաժնետեր	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)	բաժնեմասը (հազար դրամ)	բաժնեմասի չափը (%)
ՀՀ կառավարություն ի դեմս Երևանի քաղաքապետարանի	2,381,740	100	1,488,340	100
	2,381,740	100	1,488,340	100

Ընկերությունն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

Բոլոր 238,174 հատ հասարակ բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են ՀՀ Երևան համայնքին: 2021թ.-ի ընթացքում

Ընկերությունը բաժնետիրական կապիտալը համալրելու համար բաժնետիրոջից ստացել է 864,800 հազար դրամ (2020թ.՝ 443,400 հազար): Արդյունքում 2021թ.-ին Ընկերության կանոնադրական կապիտալը համալրվել է՝ 893,400 հազար դրամով, իսկ չգրանցված կապիտալը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է՝ 414,800 հազար դրամ:

17 Հետաձգված եկամուտ (Շնորհներ)

	Ոչ ընթացիկ	
Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	11,422,661	607,764
	11,422,661	607,764

	Ընթացիկ	
Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հետաձգված եկամուտ ակտիվներին վերաբերող շնորհներից	678,716	690,752
Հետաձգված եկամուտ եկամուտներին վերաբերող շնորհներից	56,687	61,676
	735,403	752,428

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	1,360,192	1,715,078
Տարվա ընթացքում ավելացում	11,307,796	1,624
Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչված	(509,924)	(356,510)
Տարեվերջի մնացորդ	12,158,064	1,360,192

Ակտիվներին վերաբերող շնորհները Երևանի քաղաքապետարանից շնորհ ստացված ավտոբուսների մնացորդային գումարներն են: Համաձայն ՀՀ և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարությունների միջև 2011թ. կնքված պայմանագրի՝ Հայաստանի Հանրապետությանը որպես նվիրատվություն փոխանցվել են 249 քաղաքային ավտոբուս և դրանց պահեստամասերը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1840-Ա որոշման համաձայն՝ վերոնշյալ քաղաքային ավտոբուսները և դրանց պահեստամասերը նվիրաբերվել են Ընկերությանը՝ վերջինիս կողմից Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի աշխատանքները կազմակերպելու նպատակով:

2021թ. ընթացքում Ընկերությունը Երևանի քաղաքապետարանի հետ կնքել է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, համաձայն որի Ընկերությանն են տրամադրվել 11,260,920 հազար դրամի քաղաքային ավտոբուսներ (Երևանի քաղաքապետի որոշումներ՝ հ.185-Ա, 01/02/2021թ., հ.1487-Ա, 14/05/2021թ., հ.4293-Ա, 03/12/2021թ., 1676-Ա, 26/05/2021թ. 41410-Ա, 24/02/2021թ., և հ.4270-Ա, 01/12/2021թ.), 46,351 հազար դրամի մետաղադրամ ընդունող սարքեր (Երևանի քաղաքապետի որոշում՝ հ.2609-Ա, 26/07/2021թ.) և տեսահսկման համակարգեր (ներառյալ դրանց տեղադրումը):

18 Հետաձգված հարկ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	21,315	22,136
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տես՝ ծանոթագրություն 16)	419	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	206	(821)
Տարեվերջի մնացորդ	21,940	21,315

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2021թ. հունվարի 1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2021թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	21,315	206	419	21,940
	21,315	206	419	21,940
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(21,315)	(206)	(419)	(21,940)

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2020թ. հունվարի 1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2020թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Հիմնական միջոցներ	22,136	-	(821)	21,315
	22,136	-	(821)	21,315
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	(22,136)	-	821	(21,315)

19 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	182,495	261,562
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	258,053	241,303
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	43,607	14,475
	484,155	517,340

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 21 օր (2020թ.՝ 48 օր):

20 Պահուստներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Պահուստներ շարունակական գործառնական ծախսումների գծով	198,489	-	120,469	-

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	198,489	116,662	(38,642)	120,469
	198,489	116,662	(38,642)	120,469

Հազար դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ավելացում	Հակադարձում	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդային պահուստ	120,469	39,920	(31,308)	111,857
	120,469	39,920	(31,308)	111,857

21 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2020թ. առաջին կիսամյակում նոր կորոնավիրուսի (COVID-19) համաճարակի արագ տարածումը խիստ ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհի գրեթե բոլոր պետությունների տնտեսությունների վրա: Մի շարք երկրներ, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, ձեռնարկել են միջոցառումներ, որոնք էական ազդեցություն են ունեցել ոլորտների մասնակիցների գործունեության վրա: COVID-19 պատճառով բազմաթիվ երկրներում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունում, բիզնեսները ստիպված են եղել անորոշ ժամկետով դադարեցնել կամ սահմանափակել գործունեությունը: Վիրուսի տարածման դեմ ուղղված միջոցառումները, հանգեցրել են բիզնեսի էական խափանումների, հանգեցնելով տնտեսական աճի տեմպերի նվազման, ինչպես երկրների, այնպես էլ համաշխարհային տնտեսության ՀՆԱ-ի կրճատման:

Ընկերությունը այս համաճարակը գնահատում է որպես հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող չճշգրտվող իրադարձություն, որի ազդեցության քանակական գնահատումը Ընկերության վրա գործնականորեն հնարավոր չէ իրականացնել բավարար ճշգրտությամբ:

Ներկայումս Ընկերության ղեկավարությունը վերլուծում է տնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությունը Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

22 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

22.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հաշվապահական գնահատումները հիմնականում վերաբերվում են հիմնական միջոցների օգտակար ծառայություններ ժամկետներին:

23 Ֆինանսական գործիքներ

23.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.6-ում:

23.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ՝ ամորտիզացված արժեքով չափվող.		
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,800	6,389
- Դրամական միջոցներ և համարժեքներ	153,717	21,273
	165,517	27,662

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական պարտավորություններ՝ ամորտիզացված արժեքով չափվող.		
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	182,495	261,562
	182,495	261,562

24 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերությունը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Ընկերությունը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

24.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Արջարժութային ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է գործառնական արժույթից տարբեր արժույթով արտահայտված գնումների և փոխառությունների հետ: Այդ գործառնությունները հիմնականում իրականացվում են ԱՄՆ դոլարով:

Ընկերությունը չի հեջավորում արտարժույթի ռիսկը:

Ընկերությունը գործարքներ է իրականացնումմ արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն և լողացող տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Ընկերությունն այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն և լողացող տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է

ֆինանսական կորուստներ կրել: Այս ռիսկի ազդեցությունը Ընկերության համար առաջանում է տարբեր ֆինանսական գործիքներից, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, ժամկետային ավանդները, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները և այլն: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները		
- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,800	6,389
- Ֆինանսական հաստատություններից ստացման ենթակա դրամական միջոցներ	153,717	16,064
	165,517	22,453

Հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2021թ.	Անտոկոս	Գործիքներ հաստատուն և փոփոխուն տոկոսա-դրույքով	Ընդամենը
Մինչև 6 ամիս	-	182,495	182,495
	-	182,495	182,495

2020թ.	Անտոկոս	Գործիքներ հաստատուն և փոփոխուն տոկոսա-դրույքով	Ընդամենը
Մինչև 6 ամիս	-	261,562	261,562
	-	261,562	261,562

Ընկերություն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը:

24.2 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ֆինանսական լծակը (զուտ պարտավորությունը բաժանած ընդհանուր կապիտալի վրա) հետևյալ կերպ.

24.3 Ֆիանանսական դրության մասին հաշվետվությունում ճանաչված իրական արժեքի չափումները և իրական արժեքի հիերարխիա

ֆինանասական հաշվետվությունները կազմելիս Ընկերության որոշ ակտիվներ և պարտավորություններ չափվում են իրական արժեքով: Ընկերության ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի չափման համապատասխան գնահատման տեխնիկա:

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,800	11,800	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	153,717	153,717	-	-
	165,517	165,517	-	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	182,495	182,495	-	-
Ընդամենը	182,495	182,495	-	-

Հազար դրամ		Իրական արժեքի չափման հիերարխիա		
Նկարագրություն	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ				
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6,389	6,389	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	21,273	21,273	-	-
	27,662	27,662	-	-

Հազար դրամ		Իրական արժեքի հիերարխիայի չափում		
Նկարագրություն	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
Իրական արժեքով չափվող պարտավորություններ				
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	261,562	261,562	-	-
Ընդամենը	261,562	261,562	-	-

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային

տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ կետերի և ֆինանսական գործիքների, որոնք, յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում, չափվել են վերագնահատված արժքով կամ իրական արժեքով, ինչպես ներկայացված է հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ապրանքների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

25 Պայմանականություններ

25.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով, ինչպես նաև տարածաշրջանի տնտեսական ճգնաժամը: Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, խաթարված հեղինակությունը, վաճառքների, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Բացի այդ, համաշխարհային տնտեսության աճի նվազման կանխատեսումներով պայմանավորված՝ Հայաստանի հետ համագործակցող երկրների տնտեսությունների վիճակի վերաբերյալ դեռևս առկա են անորոշություններ, ինչը կարող է հանգեցնել արտերկրից դրամային փոխանցումների կրճատմանը, ինչպես նաև հանքահումքային ապրանքների միջազգային գների անկմանը, ինչից Հայաստանի տնտեսությունը մեծ կախման մեջ է գտնվում: Շուկայական ավելի խիստ ճնշումը կարող է հանգեցնել Հայաստանի տնտեսության, ինչպես նաև Ընկերության վիճակի վատթարացման: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, Ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա տարածաշրջանային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

25.2 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր

ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

25.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժերառաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

25.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Շրջակա միջավայրը, որտեղ Ընկերությունը գործում է, չի պահանջում, որպեսզի Ընկերությունը ներկայացնի շրջակա միջավայրի վրա իր ունեցած ազդեցության տարեկան հաշվետվություն կամ համանման զեկույց: Ղեկավարության համոզմամբ՝ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանությունները ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

26 Գործարքներ կապակցված կողմերի միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են Ընկերության հիմադիրները և հիմնական ղեկավար անձնակազմը:

26.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Ծառայությունների մատուցում

Հազար դրամ	Մնացորդը առ 2021թ. դեկտեմբերի 31-ին	2021թ. ընթացքում մատուցված	Մնացորդը առ 2020թ. դեկտեմբերի 31-ին	2020թ. ընթացքում մատուցված
Երևանի քաղաքապետարան	980	10,783	-	19,164
Երևանտրանս ՓԲԸ	-	-	-	-
	980	10,783	-	19,164

Ծառայությունների ձեռքբերում

Հազար դրամ	Մնացորդը առ 2021թ. դեկտեմբերի 31-ին	2021թ. ընթացքում ստացված	Մնացորդը առ 2020թ. դեկտեմբերի 31-ին	2020թ. ընթացքում ստացված
Երևանտրանս ՓԲԸ	2,510	26,301	922	12,362
	2,510	12,362	922	12,362

Կապիտալի համալրում

2021թ. ընթացքում Ընկերությունը բաժնետիրական կապիտալը համալրելու համար բաժնետիրոջից՝ Երևանի քաղաքապետարանից, ստացել է 864,800 հազար դրամ (2020թ.՝ 443,400 հազար):

26.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ, ներառյալ սոցիալական ապահովության վճարները	8,205	3,677
	8,205	3,677